

ԲԱՆԱՍԵՂԾԱԿԱՆ

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ ՀԵՏ

Ո՛վ ամենատես
Այս գիշեր հոգիս միտում էր սաստիկ
Թախծութեան հրով,
Ու ես մատեանդ յոյսի պէս դրած
Տուայտանքներիս սեւ գրակալին,
Թերթում էի լուռ՝
Մո՛ւթ էի թերթում,
Լո՛յս էի թերթում
Ծո՛ղս էի թերթում
Ու թերթում կրակ ...

Եվ ո՛վ անգնին.
Ո՛վ զրուցակից ահեղ Աստծոյ,
Ես ամբողջ գիշեր
Զրուցում էի տառապելիդ հետ,
Թէեւ զրոյցս շշուկ էր միայն
Ծովիդ մոլեգին շառաչիւնի դէմ
Եւ մութ անտառիդ փոթորկումի դէմ
Տերեւի թեթեւ սոսափ էր միայն
Եւ հրդեհիդ դէմ առկայծ մի կանթեղ...

Զրուցում քեզ հետ
Ու տա՛հ շուրթերով շշնշում էի,
Ո՛վ քարեքանախ,
Դու, որ աշխարհի մեղքերը բոլոր
Քո ուսին առել,
Այդ քեռից ծալուել, հալուել, ծաւալուել,
Որ դարձել էիր ամենի մի ծով,
Ու տառապագին ալեբախութեամբ
Ինքդ քեզ զլտես,
Դարձընես ցողի մաքուր աւազան,
Դարձընես յոյսի անթախիծ ծփանք,
Խղճի անարատ ակունք դարձընես,
Արդ սատար եղիր,
Օգնական ինձ լեր,
Քանգի դեռ պղտոր ալիքի նման
Զարկում փաթեփար

Ու չեմ կարենում մաքրութեան
հասնել...
Դու, որ սքեմիդ սեւ ծալքերի մէջ
Հուր էիր դարձել,
Որ ինքնանուէր ողջակիզումով
Ինքդ քեզ այրես,
Դարձընես պայծառ հառազայթ փառաց,
Դարձընես յոյսի անհուն պատարագ
Եւ առաւօտի լուսաստղ դարձնես,
Արդ սատար եղիր,
Օգնական ինձ լեր,
Քանգի դեռ միտում ու չեմ կարենում
Հուրհրալ որպէս թրթիռը բոցի,
Պտուտում անվերջ
Որպէս մի մթին միզամածութիւն
Ու չեմ կարենում ցոլալ աստղի պէս ...

Ո՛վ յաւերժ ընթացք,
Դու, որ ընթացել, չես հասել սակայն,
Ինձ սատար եղիր,
Օգնական ինձ լեր,
Հեռում ցոլում է մի խարտեաշ
տեսիլք,
Ալեւտում է մի բոսոր ցնորք,
Եւ սակայն որքան մօտենում եմ ես,
Այնքան կրկնակի հեռանում նրանք,
Դառնում են անհաս ...
Ուժ տուր գնալու ...
Այնտեղ ոսկեւոր հեռաստաններում,
Արտեր են ծփում անորո՞մ ու սուրբ,
Եւ հասկերի մէջ հասունանում է
Համը քարութեան ու արդարութեան ...
Այնտեղ խաղողի վագերը ոսկէ
Մայրակաթ հողի ու արեգակի
Տա՛հ առնչութեամբ
Լոյս են արարում
Եւ արարում են Աստծոյ ոգի ...

Եւ աղբիւրներ կան այնտեղ խղճի պէս,
 Եւ կաղնիներ կան՝ հաւատի նման,
 Եւ ջրվէժներ կան որպէս բերկրութիւն,
 Եւ ծաղիկներ կան, որ մարդու ոտքը
 Կարող են օծել աստղի արցունքով ...
 Ո՛ւժ տուր գնալու,
 Ո՛ւժ տուր հասնելու եւ հաշակելու
 Անծայր բարութեան խորհուրդը խորին ...
 Ով օրհնաբերան,
 Ըստ մարգարէիդ ու տառապեալիդ
 Իմաստուն խօսքի.
 Ես էլ եմ ամպել ու չեմ անձրեւել,
 Արդ սատար եղիր,
 Օգնական ինձ լեր,
 Տո՛ւր ամպրոպը քո,

Որ ես լիաբուռն անձրեւեմ ծարաւ
 դաշտերի վրայ,
 Արեւը խառնեմ անձրեւիս լացին,
 Որ նա լուսաւոր թախծութեան նման
 Փռուի դաշտերին,
 Ծաւալուի որպէս ծաւի ծիածան ...
 Ո՛վ առաքեալդ կատարելութեան,
 Անկատար եմ դեռ,
 Տո՛ւր տառապագին քո ընթացքը ինձ,
 Նուիրաբերիր ալեքախումիդ տարերքը
 ահեղ,
 Շնորհի՛ր պայծառ մորիկը լոյսիդ ...

ՎԱՀԱԳՆ ԴԱԻԹԵԱՆ

ԿՈՒՋԵՆՔ ՈՒՆԵՆԱԼ

Յաճախ կը ցանկանմ եւնենալ պահեր,
 Ուր սիրտը լեցուի անհուն հրեռանքով...
 Ուր հոգին թեթեւ՝ ըզգայ դրախտներ
 Կանցնին իր մէջէն մի ակնթարթով...:

Յաճախ կը ցանկանմ անվերջ երազով
 Գիշերուան անթիւ աստղերն համբուրել...
 Հրեռանքի վերջին կայան կարծելով
 Քնքուշ թարմութեամբ վերստին ննջել...:

Աստղէ երազով վառող մեր հոգին
 Երբեմն կ'ըղծայ գարնան փրփրութեամբ,
 Ինչ փոյթ որ աշունը՝ ծառէն կեանքի
 Կը մերկացնէ յոյսերն օրօրուն...:

Արեւներ չորս դին կ'ուզենմ ունենալ
 Սրտի ջերմութիւն ըղծալ ամեն ժամ...

ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

ՍԻՀՈՒՆ

Հեռուէն Տորոսի

Ալեւոր լերանց

Խորքէն անթափանց

Սիւնուն կը հոսի:

Լեռներու սրտին

Գիտե՞ յոյզն անբաւ

Անոց որ կանխաւ

Կոհակներ էին:

Ձայնն իր ջուրերուն

Ու խաւարն հզօր

Լերանց իղձն է գոր

Կը տանի ծովուն:

Անշարժ, դարաւոր

Լեռնասարերու

Թռչելու, ծփալու

Կարօտն է բոլոր:

Ձոր Սիւնուն սարսուռն

Կ'երթայ տանելու

Լեռներէն հեռու,

Մշտառոյգ ծովուն:

ԻՆՏՐԱ